

HSBC-ն նշանակում է Նոել Քուինին HSBC Խմբի գլխավոր գործադիր տնօրեն

HSBC Holdings plc-ը հայտարարել է Նոել Քուինի՝ HSBC Խմբի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնում նշանակման մասին: Նշանակումը ուժի մեջ է մտնում անմիջապես:

Խմբի ղեկավար Մարք Թաքերը, ով նաև ղեկավարում էր թեկնածուների որոնման աշխատանքները, նշել է. «Նոելն այն եզակի թեկնածուն է, ով 2019 թվականի օգոստոսից ի վեր առաջադրվելով ժամանակավոր հիմունքով՝ գերազանց գործունեություն է ծավալել: Նա ուժեղ և կայացած առաջնորդ է, որն ունի միջազգային բանկային համակարգում և հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման ոլորտում հարուստ փորձ, ինչպես նաև բիզնեսն առաջ մղելու համար անհրաժեշտ հմտություններ ու եռանդ: Վերջին ամիսներին Նոելը սերտորեն աշխատել է Խորհրդի հետ՝ համաձայնեցնելով Բանկի կատարողականը կայուն հիմունքներով խթանելու ուղղությամբ առանցքային գործողությունները: Նա խորապես հասկանում է HSBC-ի գործունեությունը, Բանկի առջև ծառայած մարտահրավերներն և զարգացման կարևոր հնարավորություններն ու հեռանկարները: Մենք նրան մաղթում ենք ամենայն հաջողություն HSBC-ն զարգացնելու գործում»:

Նոել Քուինը նշել է. «Ինձ համար պատիվ է ստանալ HSBC-ն՝ Խմբի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնում ղեկավարելու հնարավորությունը: Վերջին ամիսներին ղեկավարելով Բանկը միջանկյալ հիմունքներով՝ ինձ համար իսկապես հաճելի էր աշխատել Մարքի, Խորհրդի ու աշխարհի տարբեր երկրներում ավելի քան 230,000 աշխատակիցների հետ՝ վերադիրքավորելով Բանկը հաջողության ուղիով: HSBC-ն առանձնահատուկ միջազգային ընկերություն է՝ տաղանդավոր ու նվիրված աշխատակիցներով: Դեռ շատ անելիք կա, և ես վստահ եմ, որ մենք կհաղթահարենք մեր առջև ծառայած մարտահրավերները՝ ի նպաստ մեր բաժնետերերի, հաճախորդների, աշխատակիցների և ողջ հանրության»:

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ը՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 65 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2019թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել են 2,751 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ-ին: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարի: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 8 գրասենյակների և մոտ 392 աշխատակիցների միջոցով: 2018թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 268 միլիարդ ՀՀ դրամ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Փի-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը: